

**ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում
գործող իրավագիտության
001 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)**

ԿԱՐԾԻՔ

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԳԻՄԱԼԵՈՍԻՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՍԱՄՎԵԼ ԳԻԼԲԱՆԴՅԱՆԻ**

**Տաթևիկ Արսենի Սարուխանյանի «Հաշտարարության ինստիտուտը ՀՀ
քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04
«դատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական
դատավարություն, վարչական դատավարություն, քրեական
դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն,
փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության
տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված
ատենախոսության վերաբերյալ**

Տաթևիկ Արսենի Սարուխանյանի ատենախոսությունը նվիրված է քաղաքացիական դատավարության հարաբերականորեն նոր ինստիտուտներից մեկին՝ հաշտարարությանը, որի արդյունավետ կիրառությունն ունի հիմնարար նշանակություն դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման տեսանկյունից:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս դատարանների գերծանրաբեռնվածության պայմաններում վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերի ներդրումն ու զարգացումը, վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերի կիրառելիության խթանումը պետության առաջնահերթություններից է և այս տեսանկյունից հաշտարարության՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային

ընթացակարգի համալիր ուսումնասիրությունն ու դրա կիրառումը խրախուսելու մեխանիզմների վերահանումն ունի առանցքային նշանակություն:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ քաղաքացիական դատավարությունում հաշտարարության ներդրումից ի վեր առկա չէ գիտական մակարդակի որևէ համապարփակ աշխատություն, որը կանդրադառնար հաշտարարության սկզբունքներին, դատարանի կողմից հաշտարարության նշանակման չափանիշներին և առհասարակ հաշտարարության ընթացակարգային առանձնահատկություններին:

Թեև «Հաշտարարության մասին» օրենքի ընդունմամբ սահմանվեցին հաշտարարության իրականացման իրավական հիմքերը, իրավակիրառ պրակտիկայում այն չստացավ լայն տարածում՝ հաշվի առնելով նաև օրենսդրական բացերի առկայությունն ու ինստիտուտի վերաբերյալ հանրային իրազեկվածության ոչ բավարար մակարդակը:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է վեր հանել թեմային վերաբերող հիմնախնդիրները, հանգամանորեն քննարկել քաղաքացիական դատավարությունում հաշտարարությանը բնորոշ առանձնահատկությունները, վեր հանել օրենսդրական բացերը և առաջարկել դրանց լուծումները:

Հեղինակը քննարկման առարկա է դարձրել տեսական և գործնական նշանակություն ունեցող բազմաթիվ խնդիրներ՝ կապված հաշտարարության ընթացակարգի, դրա կիրառելիության չափանիշների, հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնության կնքման և դատարանի կողմից դրա հաստատման առանձնահատկությունների և այլ հարցերի հետ:

Արդյունքում հետազոտության հիման վրա արվել են տեսական ընդհանրացումներ և ներկայացվել են կոնկրետ եզրակացություններ, օրենսդրական փոփոխությունների և լրացումների առաջարկություններ:

Հեղինակը գիտակցել է թեմայի հետազոտման կարևորությունը, կատարել է համապարփակ և խորը գիտական ուսումնասիրություն՝ ներկայացնելով հիմնավոր և արժեքավոր եզրահանգումներ և առաջարկներ: Կարծում ենք՝ հեղինակին հաջողվել է հետազոտության նյութ դարձնել ընտրված թեմային անմիջականորեն առնչվող առավել արդիական հարցադրումները և առաջադրել դրանց լուծումներ:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից օգտվելու համարժեք ընդունակություններ: Ատենախոսությունն առանձնանում է ինչպես թեմային

առնչվող նյութի համապարփակությամբ, այնպես էլ՝ հեղինակի բարձր իրազեկվածությամբ:

Հեղինակին հաջողվել է աշխատությունում ներկայացնել ոչ միայն ներպետական օրենսդրությունը, այլև՝ վերաբերելի միջազգային իրավական ակտերի ու դրանց մեկնաբանությունների հիման վրա ներկայացնել ոլորտի առաջադեմ միջազգային փորձը:

Ատենախոսության արժանիքներից է նաև այն, որ աշխատանքում հեղինակը ներկայացրել է ոչ միայն խնդրահարույց հարցերի վերաբերյալ այլ երկրների իրավական կարգավորումները, այլև՝ դատական պրակտիկան, որպիսի հանգամանքը էապես նպաստել է ատենախոսության հետազոտական նպատակին հասնելուն և արժեքավոր առաջարկություններով հանդես գալուն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք արտացոլված են տասնմեկ պարագրաֆներում, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսությունում կիրառվել են ընդհանուր գիտական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, սինթեզի, անալիզի և այլ մեթոդներ, ինչպես նաև մասնագիտական հատուկ մեթոդներ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական մեթոդները, որոնց օգնությամբ վերլուծվել է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների՝ հաշտարարության ընթացակարգին վերաբերելի օրենսդրությունը, գիտահետազոտական աշխատանքները, դատական ակտերը, բացահայտվել են այդ բնագավառում առկա տեսական և գործնական հիմնահարցերը, ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված գործնական առաջարկներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով վեց գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Ատենախոսությունը ծավալային և ձևավորման տեսանկյունից կազմված է սահմանված չափանիշներին համապատասխան, գրված է ընդունելի գիտական ու հստակ լեզվաոճով: Ատենախոսության կառուցվածքը նույնպես հաջողված է, իսկ ընտրված հարցադրումների շրջանակը հնարավորություն է տվել ապահովելու նաև նյութի ամբողջականությունը և եզրահանգումների հիմնավորվածությունը:

Վերոնշյալով հանդերձ՝ ցանկանում ենք ատենախոսի ուշադրությունը հրավիրել ներքոնշյալ մի քանի դիտարկումների վրա.

1. Աշխատության շրջանակներում հեղինակը մանրամասն անդրադարձել է վեճերի այն շրջանակին, որոնցով հաշտարարությունը կիրառելի չէ և ներկայացրել առաջարկություններ՝ տվյալ վեճերով հատարարության կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ: Միաժամանակ, հեղինակն անդրադարձել է դատարանի բացառիկ իրավասությանը վերապահված վեճերի շրջանակին՝ գարով այն եզրահանգմանը, որ տվյալ վեճերով ևս հաշտարարությունը կիրառելի չէ:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ աշխատանքն առավել կշահեր, եթե հեղինակն անդրադառնար նաև քրեական և վարչական իրավահարաբերություններից ծագող վեճերով հաշտարարության կիրառման հնարավորությանը՝ առանձնացնելով վեճերի այն շրջանակը, որոնցով բացառված է հաշտարարության կիրառման հնարավորությունը:

Այսպես, հաշտարարությունը կիրառելի է նաև քրեական իրավահարաբերություններում (տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական գործերով հաշտարարության մասին» թիվ R (99) 19 հանձնարարականը), որտեղ այն բնորոշվում է որպես հաշտարարի մասնակցությամբ տուժողի և հանցանք կատարած անձի միջև կամավոր հաշտեցման ընթացակարգ, որն ուղղված է քրեաիրավական վեճի հետ կապված միասնական համաձայնության կայացմանը: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ քրեական գործերով հաշտարարությունը որոշակի մեթոդների համակցություն է, որը կիրառվում է հատուկ սուբյեկտի՝ հաշտարարի կողմից քրեաիրավական վեճով համաձայնության և որոշման հասնելու նպատակով՝ վիճելի իրավահարաբերության կողմերի՝ փոխադարձ կամահայտնության հիման վրա՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով:

Միջազգային իրավական ակտերի վերլուծությունից բխում է, որ հաշտարարությունը կիրառելի է նաև վարչական իրավահարաբերություններում (տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Վարչական մարմինների և մասնավոր անձանց միջև վեճերի լուծման՝ դատական քննությանն այլընտրանքային միջոցների մասին» թիվ Rec (2001) 9 հանձնարարականը):

Ուստի, առավել տրամաբանական կլիներ, եթե հեղինակը համապարփակ ձևով անդրադառնար նաև քրեական և վարչական իրավահարաբերություններից բխող վեճերի այն շրջանակին, որոնցով հաշտարարության կիրառությունը բացառվում է:

2. Հեղինակը պաշտպանության ներկայացվող դրույթներում առաջարկել է հրաժարվել Վերաքննիչ դատարանի՝ վարույթի ցանկացած փուլում հաշտարարություն նշանակելու իրավասությունից, քանի որ այն չի բխում վերաքննիչ դատարանների սահմանադրաիրավական առաքելությունից:

Նման պայմաններում, աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակն անդրադառնար նաև Վերաքննիչ դատարանի կողմից ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և գործին մասնակցող անձանց կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու լիազորությանը:

Այսպես՝ հեղինակն իր դիրքորոշումը հիմնավորում է այն փաստարկով, որ վերաքննիչ վարույթում հաշտարարության իրականացումը գործին մասնակցող անձանց կողմից տնօրինչականության սկզբունքի իրացման արդյունք է և ուղղված չէ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության երաշխավորման նպատակով դատական վերանայման գործառույթի իրացմանը, և որքան ավելի բարձր է դատական ատյանը, այնքան տնօրինչականության սկզբունքը պետք է դրսևորվի սահմանափակ ծավալով՝ պայմանավորված տվյալ դատական ատյանի՝ Սահմանադրությամբ կանխորոշված դերով և գործառույթներով:

Ակնհայտ է, որ նշված դրույթը քննարկման առարկա դարձնելու պարագայում հեղինակը պետք է անդրադառնար նաև Վերաքննիչ դատարանում տնօրինչականության սկզբունքի մեկ այլ դրսևորման՝ գործին մասնակցող անձանց կնքած հաշտության համաձայնության հաստատման լիազորությունը պահպանելու նպատակահարմարությանը:

3. Ատենախոսության եզրակացությունում հեղինակը եզրահանգում է, որ այն դեպքում, երբ ակնհայտորեն առկա չեն երկխոսության և հաշտության եզրեր, անհրաժեշտ է նախատեսել կողմի հիմնավորված միջնորդությամբ դատարանի կողմից վերջինիս նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացման պարտադիր պահանջից ազատելու հնարավորություն, մինչդեռ, աշխատանքն առավել կշահեր, եթե հեղինակն անդրադառնար նաև դատարանի կողմից նշված միջնորդությունը բավարարելու կամ մերժելու հիմքերին, քանի որ գործնականում նշված դրույթը կարող է ընկալվել ոչ միատեսակ և հանդիսանալ հաշտարարությունից խուսափելու հիմք:

Վերը նշված դիտողություններն, այնուամենայնիվ, չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Տաթևիկ Արսենի Սարուխանյանի «Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» վերաառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997 թվականի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04 «դատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝
Ս. ԴԻԼԲԱՆԴՅԱՆ**

10.12.2022թ.

«Ս. Դիլբանյանի ատորագրության իսկությունը հաստատում եմ»՝

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝**

Հ. ԽԱԶԻԿՅԱՆ

